

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Ուղարկումը ըստ է առաջարկում 10—2 ժամ
(քայքայի կիրակի եւ տոն օրերին)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լուրով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յանդանը որոնելու եղանակ.—Ներքին Տե-
ստիքի մասին. Մամուլ. Օրէնդատները զոհեր.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաս-
տանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՌԻՐՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Խրիմի ամբարից.

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՇԵՆԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Հեռագիրները մի շարքով շարունակ
զբաղեցնում էին մեզ լուրերով մի խոշոր եւ
վերին աստիճանի հետաքրքիր դատաստանա-
կան գործի մասին: Կա Սկիտսկի եղբայրների
գործն էր, որ քննվում էր Պոլսում քա-
ղաքում: Նա արդէն երկու անգամ քննված
էր եւ այժմ քննվում էր երրորդ անգամ:

Մամուլը եւ հասարակութիւնը լարված
ուշադրութեամբ հետեւում էին այդ գոր-
ծին, որովհետեւ ամենուրեք տարածված
էր մի համոզում, որ այդ գործի մէջ տե-
ղի ունի դատաստանական սխալ
եւ ուրեմն անմեղները կարող են սխալմամբ
ենթադրվել դատաւարութեան: Դատա-
ւարութիւնը վերջացաւ եւ դատարանը ար-
դարացրեց մեղադրեալներին: Հասարակա-
կան կարծիքը եւ հանրային խղճմունքը
ստացաւ բաւարարութիւն: Ամենքն ուրա-
խացան տեսնելով, որ անհիմն եւ թիւր
հիմունքների վրա բարդած մեղադրանքը
վերացաւ, ազատութիւն տալով անմեղ
դատաւարութեան:

Ներկայ դատաստանական քննութիւնից
առաջ լսվում էին ձայներ, թէ թո՛ւ չէ
պէտք է տրվի մեղադրեալներին գործը,
թէ դատաւարական գործը հեղինակաւոր
պահելու համար պէտք է բաւականանալ
եղած քննութիւններով: Սակայն արդա-
ւարութեան բարձր ղեկավարները նա-
յեկնին գործին ընդարձակ հայեացքով եւ
նշանակեցին քննութիւն:

Դատարանն արդար ճանաչեց Սկիտսկի
եղբայրներին սպանութեան մեղադրանքի
մէջ, սակայն չը կարողացաւ մատնացոյց
լինել իսկական սպանողների վրա: Սպա-
նութեան գործը աւելի եւս մթնացաւ եւ
խորհրդաւոր կերպարանք առաւ: Ո՞վ է
իսկական մեղաւորը եւ ինչո՞ւ անմեղ մար-
դիկ, ինչպէս Սկիտսկի եղբայրներն են,
պէտք է զուր տեղը երկու երեք տարի
տանջվէին ամենաճանր կասկածների տակ:
Ահա այն հարցերը, որ այժմ զբաղեց-
նում են մամուլի եւ արդարադատութեան
ներկայացուցիչներին: Սխալ մարդկային
գործերի մէջ անխուսափելի է. երբեք չենք
կարող հասնել այն իդէալական վիճակին,

որ սխալներ չը գործենք: Բայց մի հական
խնդիր կայ այստեղ: Արդե՞ք մենք կազ-
մակերպել ենք դատաստանական գործը
այնքան կատարեալ, որ սխալների գործո-
ղութիւնը հասցրած լինե՞ր իրանց նուա-
զագոյն չափին: Ահա այդ հարցին պա-
տասխանելով, ստիպված ենք բացատրական
պատասխան տալ:

Ն ա ի ն ա կ ա ն ք ն ու թ իւ ն ը, այ-
սինքն այն քննութիւնը, որ առաջին ան-
գամ արձանագրում եւ հետազոտում է
գործած յանցանքը, որ որոնում է յանցա-
ւորին եւ ժողովում է ապացոյցներ եւ ա-
մեն տեսակ վկայութիւններ, ահա այդ
հական եւ կարեւոր քննութիւնը չունի
բաւարար կազմակերպութիւն: Այդ քննու-
թիւնից շատ բան է կախված. նա յաճախ
թելադրում է եւ ապագայ դատաւարու-
թեան հետեւանքը: Դատաստանական քն-
նիւթը պէտք է աւելի անկախ լինի, քան
այժմ եւ առաջ տանի քննութեան գործը
իր սեփական միջոցներով: Դատաստանա-
կան քննիւթը պէտք է աւելի պատուաւոր
դիրք ստանայ, քան նա ունի եւ կարողա-
նայ գործել անկախ պրօկուրօրից եւ ար-
մինիստացիայից:

Այժմ դատաստանական քննիւթի պաշտօնը
համարվում է մի փոքր եւ նախապատ-
րաստական տեղ աւելի բարձր պաշտօնի
համար: Եւ բոլոր ընդունակ անձինք, ո-
րոնք մտել են այդ պաշտօնի մէջ, ձգտում
են շուտով թողնել նրան եւ անցնել աւե-
լի բարձր աստիճանների: Այդպիսի պա-
մաններում զարմանալի է, որ դատաստա-
նական քննիւթերի պատասխանատու կոչ-
ման ասպարէզում մինչեւ այժմ երեւան
չեկան աչքի ընկնող գործողներ: Իսկ երբ
պաշտօնը կը բարձրացվի եւ կը բարե-
փոխվի, այն ժամանակ նախնական քննու-
թիւնը կը սկսի աւելի կատարեալ ձեւով
օգնել տրդարադատութեան գործին եւ
նուազացնել դատաստանական տխուր սխա-
լների թիւը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մինչեւ այժմ մեր մէջ հեղինակաւոր եւ ա-
մենամանրամասն ազգային պատմութիւնը Չամ-
չեանի պատմութիւնն է, թէեւ նա լոյս է տե-
սել մեղադրեալ հարկեր տալու եւ վեց տարի ա-
ռաջ: Չը նայած որ այդքան երկար ժամանա-
կամիջոցում պատմութիւնը իբրեւ գիտութիւն
ահագին առաջագիտութիւն է արել եւրօպա-
յում, մենք դեռ Չամչեանի վրա ենք սովորում

զային դարոցներ, ժողովրդական ձրի գրադա-
րան ու ընթերցարան, ազատաստաններ, ծո-
վային զինարաններ ու գինուորացիներ, տեսակ-
տեսակ կոլոններ, թանգարաններ, պատերազմի
յիշատակին կանգնած կոթողներ, եկեղեցական
լուսաւորութիւն, արամիայ, հեռախօս, բարե-
կարգ հիւրանոցներ, եռուն կենք, անընդհա-
շարժում—ահա իմ տեսած Սեւաստօպօլը, որ
ինալով մի ամբողջ օր ու գիշեր, կարողացայ
փոքր ի շատ ծանօթանալ քաղաքի հետ:

Սեւաստօպօլն ունի մօտ 55 հազար բնակիչ,
որ կազմված է խառն, բազմաեղ տարրերից:
Իբրեւ պատերազմական նաւահանգիստ, նա
Ռուսաստանում համարվում է պետութեան
ծովային ուժերի առաջնակարգ պատասպարան:
Քաղաքի արտաքինին մի առանձին փայլ են
տալիս ծովային բազմաթիւ հոյակապ հիմնա-
կութիւններ, որոնք ըստ կոչման եւ պաշտօնի
կառուցված են հէնց ծովագետներ, անգամ ծո-
վի ջրերում: Այդ հիմնարկութիւններն աւելի
աչքի են զարնվում ծովի կողմից քաղաքին
մօտեցող ճանապարհորդներն եւ փառաւոր տե-
սարան են ներկայացնում մանաւանդ գիշերը,
այն էլ լուսնեակ գիշերը: Առհասարակ Սեւաս-
տօպօլը, մանաւանդ նրա ծովագետայ մասը,

մեր անցեալ պատմութիւնը, իսկ ամեն մի հայ,
որ կանոնում է հայոց պատմութեան ձեռնարկ
կազմել, Չամչեանն է դնում իր առջեւ եւ
նրանից է արտագրում այն, ինչ հարկաւոր է
համարում իր «հեղինակութեան» համար: Սա
ինքն ըստ ինքեան մեր յետադիմութեան մի
մեծ փաստ է: Մինչեւ այժմ մեզ չաջողեց
կազմել եթէ ոչ մի ամբողջ պատմութիւն, գո-
նէ առանձին առանձին մօնօգրաֆիաներ զա-
նազան շրջանների վերաբերմամբ, ուր ներկա-
յացված լինի հայի կենքը, քաղաքակրթու-
թիւնը, կուլտուրական եւ գրական առաջադի-
մութիւնը: Մեզ շարունակում են կերակրել
վանական կենսաբիւլ վերջածագ պատմութեան
բով, կաթողիկոսների, վարդապետների կենսա-
գրութիւններով, այն էլ առանց քննադատա-
կան վերլուծութեան, իսկ ջատագովական տե-
սակետով: Հին ժամանակներում հայկական
տարեգրութիւնները համարեալ բացառապէս
վանականների ձեռքին էին, եւ վանականները
գիտէին գրել յայտնի ձեւով, առանց որովի կը-
ղերական-եկեղեցական նեղ տեսլանցիայով:
Նրանք գիտէին երկար ու երկար խօսել այն-
տեղ, ուր հարկաւոր էր եւ լռել այնպիսի տե-
ղերում, ուր խօսելը ձեռնառու չէր: Եւ այս
պատճառով մենք ունենք մի պատմութիւն,
որ ամբողջապէս խուճի ու ժողով, վարդապետ-
ներից ու վանական քարոզիչներից է կազմված:
Ներկայ ժամանակներում էլ, երբ այնքան զար-
գացել է պատմական կրթական, մենք դար-
ձեալ հայ վանականներից պիտի սպասենք
պատմական զանազան հարցերի լուծումը: Եւ
սակայն վանականութիւնը մեր դարում էլ մը-
նում է նոյն ոգով, ինչպէս էր առաջներում,
իսկ եթէ վերջին մի քանի տասնակ տարի-
ներում մեր պատմութեան մէջ յեղափոխու-
թիւններ են կատարվել պիտական կրթական
միջոցով, այդտեղ մենք պարտական ենք գը-
լաւորապէս եւրօպայիններին—Գրեյթմանե-
րին, Կարիերներին եւ այլն: Մեզ առում էին,
եթէ հայ ազգը ունի վանական պատմութիւն,
դա շատ բնական է եւ անխուսափելի է, քանի
որ այդ ազգը միշտ կպած է եղել իր եկեղե-
ցուն, նրա մէջ է տեսել իր կենսաբիւլ բոլոր ի-
դէալները: Բայց այդպէս է: Հայոց եկեղեցին
անպայման եւ բացառիկ հեղինակութիւն չէ
ունենել ժողովրդի վրա: Նա իր դաւանաբանա-
կան սկզբունքներով բողոքներ է յարուցել եւ
կարելի է ասել, որ բողոքականութեան սկիզ-
բը Հայաստանի մէջ է գրվել դեռ այն ժամա-
նակ, երբ ամբողջ եւրօպային կաթողիկոսութեան
մէջ ոչինչ պալատութիւն չէր գտնուում: Եթէ
նոր պատմութեան պարծանքը կազմում է Լիւ-
թերի սկսած շարժումը եկեղեցու հեղինակու-
թեան դէմ, միթէ մեզ համար ոչինչ հետա-
քրքրութիւն չը պիտի ունենայ պալատական-
ների եւ թմբկախօսների շարժումը, որ երկար

ժամանակ եւ Լիւթերից էլ շատ առաջ պաշտ-
պանում էր համարեալ մի եւ նոյն սկզբունք-
ները: Կուլտուրական եւ մտաւորական տեսա-
կէպից շատ հետաքրքրական է այդ շարժու-
ման հետադիմութիւնը, որ նուիրված է այդ շարժ-
ման եւ որի հեղինակն է վանականի միջնա-
րեան վարդապետ Հ. Բ. Սարգսեան: Ի՞նչ կը
տեսնէք նրա մէջ: Փոխանակ ստանափրկող, լայն
ուսումնասիրութեան կղերի անհամբերօր-
թիւն, իւրաքանչիւր քայլում անէ՞ք եւ հայ-
հոյանք այդ աղանդաւորների դէմ, որոնք հա-
մարձակվել են իրանց սեփական դատողու-
թիւնն ունենալ: Այդ դեռ քիչ է—հետազոտողը,
անպայման հաւատ ընծայելով թմբկախօսի
պալատականների դէմ զանազան ամբաստնու-
թիւններ, առաջները դրած հայ վարդապետ-
ներին, աշխատում է ճիւղները դուրս բերել
աղանդաւորներից, ամեն տեսակ բարոյակա-
նութիւնից դուրս հրատարակել նրանց: Բայց
տեսէք ինչ է գրում պատմական հետազոտու-
թիւնների մէջ անուն հանած Գալուստ Տէր-
Մկրտչեան «Արարատ» ամսագրի վերջին հա-
մարում:

Պալատական քրիստոնէութիւնը շատ հին է
Հայաստանում, նոյն իսկ Գրիգոր Լուսաւոր-
չից առաջ ժամանակով: Մասնաւորապէս
հարաւային Հայաստանը հարուստ էր այս
«բողոքական» աղանդաւորներով, որոնք մեր
ամբողջ պատմութեան ընթացքում մինչեւ
մեր օրերը չը զարգանային գոյութիւն ունե-
նալուց, չը նայելով հալածանքների ամբողջ
խտուրթները: Միայն մեր դարում նրանց
վերջին հեռանքը ձուլեցան եւրօպական քա-
րոզիչների ջանքերով: Նոր կազմակերպող
«հայ աւետարանական եկեղեցու» հետ
... Պալատական վարդապետութիւնը, ինչպէս
յայտնի է, ի թիւս այլոց, չէր ընդունում
Աստուածածին, խաչի, պատկերների պաշ-
տամունքը, արեւի միջնորդութիւնը, հոգե-
հանգստեան պատարագ, ուստի եւ զրա հետ
սերտ կապված հոգու հայը (հեղինակ), մա-
տաղ կամ զոհ անասունների եւ այլ նման-
ներ, որոնք հայ ուղղափառ եկեղեցու մէջ
ընդունված եւ արագորժված էին, բայց ա-
ւելի մեծ ճոխութիւն եւ բարդաւաճում էին
գտնել ուսմիկ դասի կամ «ստորին քրիստո-
նէութեան» մէջ: Տիրող եկեղեցին ստիպված
էր ոչ միայն հերքել, հալածել եւ ջնջել ա-
ղանդաւոր վարդապետութիւնը եւ նրա զը-
րուածները, այլ եւ միւս կողմից գայթակ-
կված մտերքը շինելու եւ ընդունված հա-
ւատալիքների մէջ ամբարնելու համար պի-
տի գիմեր բացի բերանալի քարոզութիւնից
նաեւ գրաւոր գէշեր, տեսլանքների, հրաշա-
պատումների, ինչպէս որ պատմվում էր
ժամանակի պահանջը եւ քաղաքակրթու-
թեան չափը:

Այնուհետեւ յօդուածագիրը բերում է մի
չարք փաստեր, որոնցից երեւում է թէ հայ
կղերք ինչ առաջներին եւ չարախօսութիւն-
ների էր գիտում ժողովրդի միտքը այդ վտան-

մարելի են կանանց ու աղամարդկանց կեր-
պարանքներ, որոնք, անշուշտ, եւսմ են գիշե-
րային անքան ախորժ ու հրապուրիչ ծովային
զբօսանքի: Ներքեւում լսելի է մի մեղմադ-
ձիկ, բայց ախորժաւոր խմբագրութիւն: Դը-
րանք գործից ազատ նաւաստիներ են, որոնք
երգով քաղցրացնում են իրանց հանգստեան
ժամերը: Իսկ հեռուց յանկարծ օդն է թըն-
դայնում չղկենաւ ուժգին, թանձր ու խուլ
սուրկոյր. այդ էլ, ո՞վ գիտէ, որ նաեւ է ծովա-
փին մօտենում կամ անից հեռանում... Նստած
մինչեւ ուշ գիշեր, քունս մոռացած՝ աչք չեմ
պոկում գեղատեսիլ ծովից ու ծովագետայ քա-
ղաքից: Միթէ մարդու աչքին քուն կը դաչ
այդպիսի մի կախարդական պատկերի առաջ...

Սեւաստօպօլի փոթորկաւոր անցյալի յիշա-
տակին կանգնած կոթողների մէջ ամենից նը-
շանաւորը «Սեւաստօպօլի պաշտպանութեան
թանգարան» կոչված հիմնարկութիւնն է: Թան-
գարանում հետաքրքրական շատ բան կայ եւ
խորհուրդ եւ տալիս ընթերցողին, եթէ երբ
եւ ինչ կաշնողի նրան ոտը դնել Սեւաստօ-
պօլ, անպատճառ տեսնել այդ թանգարանը:
Դա բնականաբար ոճով կառուցած մի հոյա-
կապ չէ՞ք, որի թէ մուտքը եւ թէ չորս բո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԻՄԻ ԱՓԵՐԻՑ

III

ԱՅԻՐԱՆ ԲԱԳԱՆ

Սեւաստօպօլ, որ յունարէն խօսք է, ասում
են, նշանակում է «սիրուն քաղաք»: Եւ, ար-
դարեւ, այժման Սեւաստօպօլը միանգամայն
աբղաթացնում է իր բանաստեղծական անունը:
Կէս դարի մէջ այս չարատանջ վայրը բոլոր-
ովին վերածնվել, անձանաչել է դառել թէ
իր ներքին կենսաբով եւ թէ արտաքին տես-
քով: Կանաչում թաղված հազարաւոր չքեղ
աներ ու չէնքեր, ծառազարդ փողոցներ, հրա-
պարակներ ու զբօսավայրեր, հասարակական
բազմաթիւ եւ բազմազան հիմնարկութիւններ,
քաղաքային ու ժողովրդական թատրոններ
վերջինին կից են նաեւ ժողովրդական ճաշա-
տուն ու թէյարան, նախալրթական եւ միջ-
նակարգ երկու սնուի դպրոցներ, կիրախօսեալ
ուսումնարաններ, նաւորդական եւ երկաթու-

м, р, м.

կիրը հանգիստ մնայ Պրոֆէսորը չէ համարում ապացուցված այն լուրը, որ իբր թէ լեհերի ջրերը երկրաշարժի միջոցին իջել էին: Նա նոյնպէս անմիջական կապ չէ տեսնում երկրաշարժի եւ Բորթոմի ու ուրիշ տեղերի հանքային եւ այլ ջրերի յորդանակում մէջ: Դա կարող էր լինել իբրեւ ուղեկից եւ անդադարձ մի երևութի: Նոյնպէս դժուար է ենթադրել, որ զոյութիւն ունենան երկրաշարժի եւ նաւթաշարժի արդիւնաբերութեան մէջ որ եւ է կապ եւ յարաբերութիւն: Մուշկետովի կարծիքով, ցնցումները եղել են ոչ խիստ հարուածների ձևով, այլ օրօրելու, թափ տալու եղանակով: Հարուածների տարբերութիւնը դանազան տեղերում առաջ է եկել լեռնային հողակազմի շերտերի զանազան նստումաձևերից: Այնտեղ, որ ձգված են որոշ ծալքեր յայտնի ուղղութեամբ, հարուածներն էլ ընթացել են նրանց դժով: Մուշկետով չէ բաւականացել միայն երկրաշարժի չրջանով, այլ ուսումնասիրել է չրջակայ մի քանի տեղեր, և գնացել է այցելելու Սեւանի լիճը: Ներկայ տեղեկութիւնները ինքնազատական են: Պէտք է սպասել պրոֆէսորի յատուկ զեկուցման, որ, հաւանական է, պատրաստ կը լինի այնպէս:

Մեզ խնդրում են հրատարակել հետեւեալը. «Մի որ օրիորդ, որ Թիֆլիսի մի հարուստ հայ ընտանիքում բաւական ժամանակ զատաւարակել է մանկանց, կամենում է ամուսնանալ: Օրիորդը պատմում է բանի էութիւնը տանտիրէնը եւ խնդրում է, որ իրան արձակեն պաշտօնից: Տիկինը շատ բարեկամ է նրա վրա, ասում է թէ ինչպէս նա համարձակվում է այդ բանն ասելու: Տիկինը բացի նրանից որ օգնութիւն չէ անում որբին, դեռ փողոցային յիռոցներ է թափում խեղճի դիմին եւ հրաժարվում է տալ թէ օրիորդի չորերը եւ թէ վարձը: Նա մինչեւ անգամ յանդգնում է ջրով լի չիւր բարձրացնել օրիորդի վրա... Մի խօսքով, կատարեալ ձորատական դրութիւնն է:»

Մենք յայտնել էինք, որ Թիֆլիսի վաճառանոցում սկսել են երեւալ մեծ քանակութեամբ մապու կենդանիներ եւ էփանացել է միւսը: Քաղաքային դուման, աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, որոշել տաւարի մի գինը 10 կոպէկից իջեցնել 8 1/2 կոպէկի ֆունտը:

Թիֆլիսում գոյութիւն ունեցող Աւալիան ձիաբաշի տերերը՝ պ. պ. Ի. Կորգանեան եւ Պ. Ալիբեկեան, որոշել են յանձնել այդ ձիաբաշը ընդհանրապէս անօտն ընկերութեան: Նրանք դիմել են քաղաքային դումային, ինչդիպելով, որ իրանց թոյլ արդի ծախել ձիաբաշը: Դուման իր վերջին նիստում, յունիսի 5-ին, որոշել թոյլ տալ այն պայմանով, որ «ձիաբաշի գին» աւելով հասկացվի ձիաբաշին վերաբերեալ ուղին, կառքերը, ձիերը իրանց պարագաներով, իսկ պաշտօնական համար վերցնել ներկայ տէրերից 10,000 ռուբլի գրաւական՝ արժեթղթերով:

«Съверн. Кургель» լրագիրը լսել է, որ չլուծում կը գործադրվեն նոր կանոններ, որոնք ուղղված կը լինեն «հաւաքական» արբեցողութեան դէմ հրապարակական եւ անհատարակ բաց տեղերում: Տեսնելով, որ արբեցողական օղելվածաւորութիւն մոյնեղուց յետոյ արբեցողութիւնը անցաւ փակված գինեւաներից փողոցի եւ հրապարակի վրա, արդարադատութեան մի-նիստութիւնը որոշել օրէնսդրական կարգով սահմանափակել այդ բանից առաջացող անկարգութիւնները: Նոր կանոններով «հաւաքական» արբեցողութիւն անելու համար փողոցներում յանցաւորները առգանքի կենթարկվին հաշտարար դատարանի հայեցողութեամբ (մինչեւ 50 ռ.), կամ 5 օրով բանտարկութեան:

Այս օրերս մեր քաղաքը հիւր եկան Ա. Պ. Զէլուով եւ Մաքսիմ Գորկի (Ա. Պէշկով) ռուսաց յայտնի վիպասանները եւ իջան «Съверный Номера» հիւրանոցը:

Թիֆլիսի նահանգական դատարանի քննիչ պ. Արէ երկուշաբթի, յունիսի 5-ին հարցու-թործի ենթարկեց քաղաքապետին Եւանգելո-վին, վարչութեան անդամներ Ե. Խոսրոսիլին եւ իշխան Ա. Արգունիսիսին, իսկ երեքշաբթի, յունիսի 6-ին, վարչութեան նախկին անդամ Ա. Իվանենկոյին՝ ձիաբաշ երկաթուղու գործի վերաբերմամբ:

Թիֆլիսի դատաւարանական պալատում եւ նահանգական դատարանում պարապմունքներ

յունիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը սկսվում են առաւօտեան 8 ժամից եւ վերջանում են ցերեկվայ 1 ժամին:

ՉԻԱՏՈՒՐԻ գիւղից մեկ գրում են. «Տեղիս մարդանցի փոխադրութեան համար, ֆրախտը 2-րատուրից մինչեւ Շօրապան 7 կոպէկ էր, իսկ Շօրապանից մինչեւ Փօթի 3 կոպէկ, այնպէս որ բոլորի համար ձեռնու էր այս գինը: Բայց 4—5 օր առաջ Թիֆլիսից, երկաթուղու վաճառականական բաժնի կառավարչից, հեռագիր ստացվեց՝ որ մարդանցի ֆրախտը 3 կոպէկով էլ պիտի աւելանայ, այսինքն 2-րատու-րից մինչեւ Շօրապան տեղափոխութեան հա-մար յունիսի 1-ից սկսեցին առնել 10 կոպէկ: Այս յանկարծակի փոփոխումը բոլորին չուս-րեցրեց, ոմանք իրանց դորները դադարեցրին, ոմանք էլ յայտարարեցին մարդանցի գինը 5 կոպէկ, որը աւելում էին 7 1/2 կոպէկով: Այս լուրի վրա պարսիկ ջորեպանները սկսեցին փախուստ տալ, իրանց հետ տանելով իրանց կենդանիները եւ վաճառականներից ստացած նախաձեռնար փողերը: Եթէ ֆրախտը այս գնով մնար, մարդանցի գործով պարապողները պիտի ենթարկվէին մօտաւորապէս 1,000,000 ռուբլուց աւելի վնասի: Բայց, բարեբաղդա-բար, այս նորմալութիւնը շատ չը տեսնեց: Յունիսի 3-ին նորից վերոյիշեալ վաճառակա-նական բաժնի կառավարչից հեռագիր ստաց-վեց՝ որ նորից հին գնով պէտք է փոխադրվի մարդանցը: Այս լուրը կայծակի նման տա-րածվեց ամբողջ գիւղում, եւ ամեն մի անհա-տի գէժքին երեւաց ուրախութեան ժպիտը: 2-րատուրին նորից կենդանութիւն ստացաւ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, ապրիլի 23-ին
Ամսիս 13-ին եւ 15-ին տեղիս կենտրոնական ուսումնարանի սրահում «Վատարաններ» խումբը ներկայացրեց «Ժնըրվիկ» ողբերգու-թիւնը, որ փոխադրած էր ուսուցիչ եւ ներ-կայացման ղեկավար Մ. Կարապետեանը: Առաջին դերերը սրահը գրեթէ լիքն էր, բայց երկրորդ դերերը դատարկ, ինչպէս որ միշտ լինում է. մուտքը 40—50 թուամսի կը հասնի: Ձիգան գիւղի խնդրել աշող է ընթանում թէհնանում, չնորհիւ Խորէն արեղայի եռան-դուն գործունէութեան: Ասում են, որ թէհ-րանից հասած հրահանգի համաձայն, տեղիս կուսակալ Զէլու-Սոլմանը խոտապել է մի վա-ւերացրած թուղթ տալ, յայտնելով, որ գիւղը հայերին է պատկանում, որը, ինչպէս ասում են, պիտի վաւերացնվի եւ Թեհրանի ռու-սաց ղեկավարի կողմից:

Անցեալները այստեղով անցան երկու խումբ ուսու ինժեներներ: Մի խումբը Արաբստանի ճանապարհները հետազոտելով՝ Բենդէր-Աբբաս պիտի գնայ եւ միւս խումբը եւս Ֆարսիս-տանի ճանապարհով Բուշիր է գնալու. սրանց ընկերակցում էր որպէս թարգման թէհրանի Միրզա Մարտիրոս խան Ամիր Թումանի որդին:

Արդէն գրել եմ, որ Կալիթայի հոշակաւոր Արաբստանց տունը 26,000 ռուբլի էր կտա-կած ազգային բարեգործական հաստատու-թիւններին: Ուրախութեամբ ծանուցանում եմ, որ վերջին պատասխով Կալիթայից գրված էր: Թէ նոյն տունը կը կին 20,000 ռուբլի է կտակել Կալիթայի եւ Նոր-Ջուղայի հայոց եկեղեցիներին եւ բարեգործական հաստատու-թիւններին ի յիշատակ իրանց հանգուցեալ անդամ Սէթ Յարութիւն Արաբստանի Կրկին նկատելի է, որ այս գումարից եւս բաժին չէ հանված տեղիս ուսումնարաններին: չը գիտեմ սա հետեւանք է անտարբերութեան դէպի կրթական հաստատութիւնները, թէ դեռ պիտի լսենք, որ մի խոսք գումար էլ կտակած է ուսումնարաններին:

Մեր երկսեռ ուսումնարանների հոգաբար-ձուրէրը վերջապէս աշղոած է Կովկասից հրաւիրելու այստեղ մի ուսուցիչ եւ մի մա-կավարժուհի, ամուսիններ, որոնք առաջիկայ յուլիս ամսին այստեղ կը լինեն: Կը յուսանք արանց այստեղ գալով աւելի զարկ կը արվի տեղիս կրթական գործին, մասնաւորապէս ի-գական սեռի, որը միշտ կաղէկաղ էր ըն-թանում մանկավարժուհու բացակայութիւնից:

Նոր-Ջուղայից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily Mail» լրագրում գտնվում են հե-տաքերի տեղեկութիւններ «Մեծ բուռնցքի»

կազմակերպութեան մասին, որոնք տարբեր-վում են ուրիշ լրագիրներում այդ առիթով հաղորդած տեղեկութիւններից: «Մեծ բուռնց-քի» աղանդը այն զաւանի ընկերութիւնների թւին է պատկանում, որոնք դարաւոր պատ-մութիւն ունեն: Դա հին ընկերութիւն է եւ առաջ նա անուանվում էր «մեծ սրի ընկերու-թիւն»: Այդպիսի ընկերութիւններ 2-րատու-նում յաճախ փոխում են իրանց անունները, որպէս զի ազատ լինեն իրանց դէմ հրատա-րակվող հրովարտականից: Ընկերութեան սկզբ-նական նպատակն էր մարմնական վարժու-թիւններով զարգացնել իր անդամների ֆիզի-քական ոյժերը, որպէս զի նրանք իրանց ըն-տանիքների քաջ պաշտպաններ դառնային: Նրանք աւագակութեան կատարի թշնամիներ էին եւ հայրենիքին շատ ծառայութիւններ էին մատուցանում: «Մեծ բուռնցքի» աղանդի ան-դամները մինչեւ այժմ էլ պահպանել են սէր դէպի առէտիական խաղերը, բայց այդ նպա-տակը այժմ երկրորդական տեղ է բռնել եւ նախկին մասնաւոր ընկերութիւնը դարձել է մի սպանակի քաղաքական աղանդ բուռնացե-տական կազմակերպութեամբ: Այդ աղանդը տասն եւ մէկ միլիոն անդամներ ունի: Ժողո-վրդի մէջ այդ աղանդի անդամների մասին ամբողջ լեզվազան են կազմվել Ասում են, որ նրանք մարդարէանալու չնորք ունեն, որ անասանելի հովանաւոր հեռացնում է նրան-ցից «օտարերկրացի սպիտակ ստամոքսի գըն-դակները»: Սրբ անցեալ տարի սարսափելի անձրեւների սկսեցին զայ 2-րատուութեամբ, «Մեծ բուռնցքի» անդամները համոզեցին իրանց դիւ-րանաւոր համարադրաբացիներին թէ անձրեւ-ները կը դադարեն միայն օտարահպատակնե-րին արտաքսելուց յետոյ, եւ թէ նրանց ներ-կայութիւնն է պատճառ, որ այդ դժբաղդու-թիւնը հասել է իրանց:

«Պրոսական ժողովրդական լուսաւորու-թեան միսիստի» սկսած հայաժանները լեհա-կան լեզուի մասնաւոր դաստիարակման դէմ Պօզնանում, առաջ բերին, «Kraj» լրագրի խօս-քով, լեհ կանանց մի շատ բազմամարդ մի-տինգ, որ կայացաւ այս օրերս: Միտինգ կազ-մակերպողները հրաւերին արձագանք տուցին երկու հազարից աւելի կանայք, սկսած տեղա-կան արհեստավարայի ներկայացուցիչներից եւ վերջացնելով աղախնայներով եւ գեղջկուհի-ներով: Նրանք բոլորն էլ բողոքում են իշխա-նութիւնների գործողութիւնների դէմ եւ յայտ-նում են իրանց անդողող կամքը՝ պահպանել լեհական լեզուն:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

5 յունիսի

ԲԵՐԼԻՆ: Զիֆուր գերմանական հիւպատոսը հեռագրեց, որ վերջին շոգնաւորի ստացած տեղեկութիւնների համեմատ, ղեկավարները քանդուղու եւ գերմանական ղեկավարի սպանու-թեան մասին ոչինչ յայտնի չէ:

ԼՕՆԴՕՆ: Եւալօնիան դիտարկութիւն ունի հազար մարդ ուղարկել Տակու եւ կատարեալ համաձայնութեամբ գործել եւ րօպական պե-տութիւնների հետ:

ՇԱՆԳՀԱՅ: Հեռագրական հաղորդակցութիւ-նը Տեանցղին հետ դեռ ընդհատված է. ներ-կայումս ընդհատված են հեռագրական բոլոր հաղորդակցութիւնները Պէկինի եւ Տեանցղինի միջեւ: Այստեղի հիւպատոսները խորհրդակ-ցում էին այն միջոցների մասին, որ պէտք է ձեռք առնել օտարահպատակներին պաշտպանե-լու համար: Որովհետեւ պարզվեց, որ ոչինչ վտանգ չը կայ եւ փոխարքան երաշխաւո-րում է օտարահպատակների ապահովութիւնը, ուստի վճուղից պաշտպանողական ոչինչ միջոց-ներ ձեռք չառնել:

ՊԱՐԻՉ: Հօնկոնցի ֆրանսիական հիւպատո-սի հեռագրի մէջ չէ յիշատակվում գերմանական ղեկավարի սպանութեան եւ դիպլոմատիական միասինների աւերման մասին Պէկինում: Տեանց-ղին ֆրանսիական հիւպատոսի հեռագրի մէջ հաղորդվում է, որ Պէկին ուղարկված եւրօ-պական զօրաւորները շատ դանդաղ է առաջ գնում: Ապստամբները այրում են բողոքական հիմնարկութիւնները: Տօնկինից Տեանցղին են ուղարկված զօրքերը արտիլերիայի հետ միա-սին, իսկ Ֆրանսիայից ուղարկված ուրիշ զօր-քերը անտեղ կը հասնեն յուլիսի 3-ին:

Դէլապոսի պահանջմամբ, Լանկաստ հրամա-նեց պարտաւոր կրէյսներին մի խումբ ծո-վապետ կուրթօլի նաւատորմի ուժեղացնելու համար, հրամայեց նոյնպէս պատրաստել փո-խադրող նաւ օդանավ զօրքեր փոխադրելու համար, եթէ պահանջվի:

ՊԵՏԵՐԲՐՈՒՐԳ: Յունիսի 5-ին Պետերսօֆ ժամանեցին Բորձր-նորապատկեր Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչ եւ Մեծ Իշխանուհի Մա-րիա Գէորգիւնա: Դատչինայում Բարձր-նո-րապատկերին զիմաւորեցին Թագուհի Կայս-րուհի Մարիա Ֆէօդօրօվնա, յունաց թագուհին

եւ Մեծ Իշխան Միխայլ Նիկոլաւիչ: Բարձր-նորապատկերը յունաց թագուհու եւ Մեծ Իշ-խան Միխայլ Նիկոլաւիչի ուղեկցութեամբ, Գատչինայից գնացին Պետերսօֆ, ուր գիմա-ւորեցին նրանց Թագաւոր Կայսրը եւ Թագու-հի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդօրօվնա: Նո-յա Մեծութիւնները եւ Բարձրութիւնները այգտեղից անցան Ալեքսանդրիա, դէպի Ալեք-սանդր Նէվսկիի եկեղեցին, ուր հոգեւորակա-նութիւնը զոհացողական մաղթանք կատարեց:

ԲԵՐԼԻՆ: Զիֆուր գերմանական հիւպատո-սից ստացված է հեռագիր. «Եւալօնական ա-կանաւոր հաղորդում է, որ միտինգները Պէ-կինում վերցրված են: Հօնկոնցի հիւպատոսից ստացված տեղեկութիւնների համեմատ, այն-տեղ ոչինչ տեղեկութիւններ չը կան միաժա-նների գրաւման մասին»:

ԿԻԵՎ: Միտրօպոլիտ Իօնիկի հիւանդացու-ինֆուէնցայով, որ բարդացաւ թոքերի բոր-բոքումով:

ՀՕՆԿՕՆԳ: 2-րական կանոնաւոր զօրքերը դիմադրում են եւրօպական զօրքերի առաջ չարժեղում: Ստիպված կը լինեն Տակուի մարտիկները ուղարկուել:

ՇԱՆԳՀԱՅ: Արդէն երեք օր է, որ Պէկինի, Տեանցղինի եւ Շանգհայի միջեւ հեռագրական հաղորդակցութիւնն ընդհատված է եւ ոչինչ ճիշդ տեղեկութիւններ չը կան այն բանի մա-սին, թէ ինչ է կատարվում Պէկինում: Տա-կուի մէջ շարունակվում է կռիւ այնտեղի չի-նական մարտիկների եւ պետութիւնների զին-ւորական նաւերի միջեւ:

ՇԱՆԳՀԱՅ: Յունիսի 14-ին 1700 մարդուց բաղկացած ռուսաց զօրքը գնաց դէպի Պէկին: Կլանգուտի նահանգի փոխարքան գիմնց գա-հին՝ միջնորդելով օտարահպատակների դէմ ուղղված անկարգութիւնները ճնշելու մասին:

ՊԵԿԻՆ: Գիւղերը անկարգութիւններ տեղի ունեցան օտարահպատակների դէմ: Քաղաքի արեւելեան մասի ամենագեղեցիկ շինութիւն-ները այրված են. օտարահպատակների մօտ ծառայող հարիւրաւոր քրիստոնէական սրի են անված. բոլոր օտարահպատակները գտնվում են օտար պետութիւնների հիւպատոսների պաշտպանութեան տակ: Կարծում են, որ եւ-րօպացիները ոչ ոք չէ վնասված:

ԵՕԿՕՀԱՄԱ: Միտրօպոլիտաւոր, կայսրի պահանջմամբ, համաձայնվեց, ի նկատի առնե-լով իրերի գրութիւնը 2-րատուութեամբ, շարու-նակել իր պաշտօնավարութիւնը: Մամուլի մի մասը պահանջում է, որ Եւալօնիան օգնէ «Մեծ բուռնցքի» ապստամբութեան ճնշման գործին, բայց կառավարութիւնը տրամադիր է բաւա-կանանալ միայն Եւալօնական շահերի պաշտ-պանութեամբ 2-րատուութեամբ:

ԿՕԲԷ: Եւալօնիան վճեց 3000 մարդ ուղար-կել 2-րատուութեամբ:

ԼՕՐԵՆՏՕ-ՄԱՐԿԵԶԷ: Կրիգէր փոխադրեց իր զիմաւոր բանակը Ալկմար, Նէլսոնի մօտ:

ԲԵՐԼԻՆ: Գերմանական «Եւալօն» մար-տանաւը եկաւ 2-րատուութեամբ եւ ճանապարհ ըն-կաւ դէպի Տակու:

ԶԻՖՈՒ: Այսօր առաւօտ եկաւ Եւալօնական մարտանաւը եւ տեղեկութիւն բերեց, թէ եւ-րօպական ծովային ոյժերը տիրեցին Տակուի մարտիկներին: 2-րական կոմենդանտն ուլ-տիմատում ներկայացնելուց յետոյ, 17 մարտ-կոցներ կրակ բաց արին գնդաւորական նաւերի վրա: Նաւատորմը պատասխանեց թնդանթիա-ձգութեամբ եւ ստիպեց չինական թնդանթիա-րին լուել, որից յետոյ մարտիկները գրաւեցին:

ՇԱՆԳՀԱՅ: 2-րական բանակը 2-րայգեա-նում փակեցին իրանց գրաւեցականները «Մեծ բուռնցքի» երկրպագի: Շանգհայի բանակը յետ են պահանջում առաջ արված ավանները: Եւանցղէ չըլանում յուզմունք է տիրում: Զի-ֆուր մէջ հանգիստ է:

6 յունիսի

ՊԵՏԱՅԳՕՐՍԿ: Հասաւ Բուխարայի էմիրը, որը կը մնայ այստեղ մէկ ամիս, իսկ յետոյ կը թաղ կրի:

ԶԻՖՈՒ: Օտար պետութիւնների պատերազ-մական նաւերից եղած յարձակմամբ վերցրված են Տակուի մարտիկները: յարձակման ժամա-նակ գերմանական պատերազմական «Բլախ» նաւից սպանվեցին երեք մարդ եւ վիրաւոր-վեցին 7 մարդիկ: 2-րայցիները ուղարկուում են օտարահպատակների ընակելութիւնը: Ոչինչ տեղեկութիւններ չը կան Պէկին ուղարկված գերմանական զօրաւորների եւ այնտեղի ղեա-պանութիւնների մասին:

ՏՕԿԻՕ: Եւալօնիայի կողմից 2-րատուութեան են ուղարկվում զօրքեր. առ այժմ ուղարկվում են

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.